3) «Էյ Ի Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2011 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված N 3-80 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2012 թվականի սեպտեմբերի 1-ը գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկում՝ 115894 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՆՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2011 թվականի N Մ - 872-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-566-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 5-ի N 3/3.8-1/85524-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 7-ի N ԱԱ/3-4/7128-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի (ՀՎՀՀ՝ 00057312) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարալիկ-համայնք» ծրագրի մասին» N Մ-566-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Միկա Յեմենտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03012933) 2011 թվականի սեպտեմբերի 29-ին կնքված՝ N 87 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ցեմենտի ձեռքբերում՝ 883340 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հոկտեմբերի 2011 թվականի N Մ-873ա
քաղ. Երևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-90-Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱ-
ՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում
դեղակայուն տուբերկույրոցի կառավարման ընդլայնում»
դրամաշնորհային ծրագիր)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջա-
պահության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 10-ի N ՍՔ/15-1/9288-11 գրու-
թյունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի
հոկտեմբերի 13-ի N 3/3.8-1/85982-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարության
առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի N ԱԱ/3-
4/7329-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ Ո Ւ Մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարա-
րության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկույրոցի ու մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնա-
դրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն
անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգոր-
ծական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի «Հա-
յաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկույրոցի կառավարման ընդլայնում»
դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-90-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյան բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի
սեպտեմբերի 30-ի N Մ-821-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի
իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Դավարո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02585881) 2011 թվականի սեպտեմբերի 23-ին
կնքված՝ N ՇՀԱՊՁԲ-11/16-ԱՆԳՀ-03 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով
նախատեսվում է բժշկական սարքավորումների և գործիքների ձեռքբերում՝ 8078000 դրամի
չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-
տանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԻՇ



Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

21 հոկտեմբերի 2011 թվականի N Մ-
քաղ. երևան

874

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ-228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-
ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցու-
թյուն» դրամաշնորհային ծրագիր)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջա-
պահության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 10-ի N ՍԲ/15-1/9289-11 գրու-
թյունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի
հոկտեմբերի 13-ի N 3/3.8-1/85987-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N ԱԱ/3-
4/7310 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարու-
թյան և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմի-
ջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հան-
րապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» ծրագրի
մասին» N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար
ունի զգալի նշանակություն՝

«Արֆարմացիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02505735) 2011 թվականի սեպտեմբերի 23-ին
կնքված N ՇՀԱՊՁԲ-11/4-ԱՆԳՀ-01 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով
նախատեսվում է դեղորայքի ձեռքբերում՝ 29001339 դրամի չափով, առանց ավելացված
արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
21 հոկտեմբերի 2011 թվականի N Մ- **875** -Ա
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱ-
ԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-328 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 13-ի N 3/3.8-1/85988-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի N ԱԱ/3-4/7337-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողովի 2001 թվականի հոկտեմբերի 10-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի «Հույսի ավան» ծրագրի մասին» N Մ-328 որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի փետրվարի 8-ի N Մ-056-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԳՐԻՎԱ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04719504) 2011 թվականի հոկտեմբերի 10-ին կնքված՝ N Դ-10/10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինանյութի ձեռքբերում՝ 3000000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԾ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2011 թվականի N Մ - 876 - Ա
քաղ. երևան

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԵՎ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԻՔԱՎՈՐ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂ-
ՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 17-ի N 3/3.8-1/86111-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 6542-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 11-ի N 3/3-6/7233-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակելի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի կողմից իրականացվող՝ 82107846 դրամ ընդհանուր արժողությամբ «Աջակցություն կարիքավոր հողօգտագործողներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի ֆինանսավորմամբ ձեռք բերված գյուղտնտեսական ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում.

1) հացահատիկային չորանոց՝ 52 տեղ, 11470 կգ ընդհանուր քաշով, 51882031 դրամ ընդհանուր արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, Սյունիքի տարածաշրջանային մաքսատուն.

2) հացահատիկի չորանոցի կառուցման համար անհրաժեշտ սարքեր՝ 53 տեղ, 18650 կգ ընդհանուր քաշով, 30225815 դրամ արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, Սյունիքի տարածաշրջանային մաքսատուն:




3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:




Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հ Ա Ս Ս Ա Տ Վ Ա Մ Է
 ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության
 հիմնադրամի գործադիր տնօրենի կողմից
 Վ. Բաղդասարյան «07» հոկտեմբերի 2011թ.




**« Ա ջ ա կ ց ու թ յ ու ն Լ Ղ Հ կ ա ռ ի ք ա վ ո Ր հ ո ղ օ գ տ ա գ ո Ր ծ ո ղ ն Ե Ր Ի ն »
 Ծ Ր Ա Գ Ի Ր**


Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է աջակցել ԼՂՀ հողօգտագործողներին
Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Սահմանված կարգով օգտվել հարկային և մասնաճիւղ արտոնություններով
Բարեգործը	ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ, ԼՂՀ, քաղ. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 40, ՀՎՀՀ 90023094
Ծրագիրը կատարողը	ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ, ԼՂՀ, քաղ. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 40, ՀՎՀՀ 90023094
Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ԼՂՀ Ասկերանի շրջան, գյուղ Խրամորթ, ոլորտը՝ գյուղատնտեսություն
Ծրագրի բյուջեն	51 882 031 ՀՀ դրամ և 30 225 815 ՀՀ դրամ
Բարեգործություն ստացողը	ԼՂՀ հողօգտագործողները
Ծրագրի իրականացման տևողությունը	5 տարի՝ 2011թ.-ից մինչև 2016թ.
Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Adakusutma 2103» մոդելի հատիկի չորանոց՝ 51 882 031 ՀՀ դրամ և ուկրաինական «Բուդմոնտաժ Կոլոս» կազմակերպությունից ստացված չորանոցի սարքավորումներ՝ 30 225 815 դրամ
Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Adakusutma 2103» մոդելի հատիկի չորանոց՝ 51 882 031 ՀՀ դրամ և ուկրաինական «Բուդմոնտաժ Կոլոս» կազմակերպությունից ստացված չորանոցի սարքավորումներ՝ 30 225 815 դրամ
Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում



<p>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</p>	<p>Համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ</p>
<p>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</p>	<p>Ծրագրի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է հիմնադրամի վերահսկողության բաժնի կողմից և սահմանված կարգով տեղեկատվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով</p>



20.15/1



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


**21 հոկտեմբերի 2011 թվականի N Մ- 877 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-
ՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 4)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի N 3/3.8-2/84951-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի N ՀԲ/22/8702-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 20-ի N ԱԱ/3-6/6693-11 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից որպես օժանդակություն՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղորայքի (4 տեղ, 140.6 կգ ընդհանուր քաշով, 24755.25 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1120.54 եվրո, «Չվարթոնգ» ՍՏ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**21 հոկտեմբերի 2011 թվականի N Մ-
քաղ. երևան**

878 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-
ՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 3)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի N 3/3.8-2/84953-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի N ՀԲ/22/8699-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 20 -ի N ԱԱ/3-6/6694-11 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից որպես օժանդակություն՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղորայքի և բժշկական պարագաների (44 տեղ, 4519 կգ ընդհանուր քաշով, 168052.33 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6580 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2011 թվականի N Մ- 879 -ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-
ՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 3/3.8-2/84589-11, Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 17-ի N ՀԲ/22/8481-11 և
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի
2011 թվականի սեպտեմբերի 19-ի N ԱԱ/3-6/6652-11 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակելի ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից որպես
օժանդակություն՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության
«Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված
դեղորայքի (27 տեղ, 86 կգ ընդհանուր քաշով, 483471.40 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ
արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1102.71 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ)
ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդա-
սիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավար-
տելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել
ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ 

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2011 թվականի N Մ-880
քաղ. երևան

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 12-ի N 3/3.8-2/85919-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 10-ի N ԱԱ/3-6/9291-11 եզրակացությունները, **ո ր ո -
շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Շվեյցարիայից «Natalie Stiftung» բարեգործական հիմնադրամի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության հասցեով ուղարկված օրթոպեդիկ պարագաների (300 կգ ընդհանուր քաշով, 1170 շվեյցարական ֆրանկ ընդհանուր արժեքով, Սյունիքի ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի համար:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարու-
թյուն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի
Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
21 հոկտեմբերի 2011 թվականի N Մ- **881** -Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴՄԻԱՅԻ «ԷԿՈԼՈԳԱՆՈՍՖԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 17-ի N 3/3.8-1/86073-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 04/07-1/11936-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 13-ի N ԱԱ/3-6/7273-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Յոհանեսբուրգի Վիտվատերսրանդի համալսարանից UNESCO-ի «Ջուրը, որպես քիմիական լուծույթ» ծրագրի շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված 5 դպրոցական փաթեթների և տպագրված նյութերի 5 հավաքածուի (2 տեղ, 27 կգ ընդհանուր քաշով, 674 ԱՄՆ-ի դոլար արժեքով, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 440 ԱՄՆ-ի դոլար, ՄՓԵԱԱՓԱՄ մաքսատուն) ներմուծման և բաշխման ծրագիրը (բաշխման ցանկը կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամիսի տեղեկատվություն:

3. Մոցն որոշումն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:


ՆԱԽԱԳԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**Դպրոցական փաթեթներ ստացող շահառուների անվանումները
և հասցեները**

1. Երևան ք. Գրիբոյեդովի անվան N 41 հիմնական դպրոց ՊՈԱԿ Մյասնիկյան 2,
2. Արմավիրի մարզ գ.Գրիբոյեդովի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ,
3. ք.Քաջարան N 2 հիմնական դպրոց ՊՈԱԿ Աբովյան 12,
4. Տավուշի մարզ Տավուշ գյուղի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ,
5. Արարատի մարզ գ.Մասիսի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ



✓



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2011 թվականի N Մ-
քաղ. Երևան

882-Ա



ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 3/3.8-2/86292-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N ՀՔ/22/9606-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 17-ի N ԱԱ/3-6/7342 -11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Հայ օգնության միության կենտրոնական վարչության կողմից Հայ օգնության միության հասցեով ուղարկված բժշկական պարագաների (3 տեղ, 73 կգ ընդհանուր քաշով, 4490 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 562, ցանկը կցվում է, ՄՓԵԻՍԱՓԱՄ ՄՏ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Հայ օգնության միության Ախուրյանի Մոր և մանկան առողջության կենտրոնի համար:

2. Հայ օգնության միությանը՝ բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն բաշխման վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:


ՆԱԽԱԳԱԷ


Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
21 հոկտեմբերի 2011 թվականի N Մ- 883 -Ա
քաղ. երևան

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՏԵՆԱ-
ԴԱՐԱՆ» ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈ-
ՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԵՎ ՇՐՋԱԿԱ
ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (2-ՐԴ ՓՈՒԼ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 3/3.8-1/86138-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 19-ի N 6605-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 19-ի N 03/07-1/12006-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 18 -ի N ԱԱ/3-4/7397-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է** .

1. Բարեգործական որակել «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցում՝ 740450000 դրամ արժողությամբ ծրագիրը (2-րդ փուլ) (կցվում է):


2. «Մատենադարան» հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված

ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
21 հոկտեմբերի 2011 թվականի N Մ - 884
քաղ. երևան

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 5 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 3/3.8-1/86137-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 01/6613-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 03/07-1/12043-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N ԱԱ/3-4/7394-11 ու Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 01/14.2/3956-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող 1261577 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զարենցավան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2011 թվականի հոկտեմբերի 12-ին կնքված N ՀՀ-Կ-16/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի պատրաստում և տեղադրում՝ 1261577 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության

կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գիտության և կրթության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



«13» հոկտեմբերի 2011թ.

« ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում »

ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ապահովել Չարենցավան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցի մեկ դասարանը և ուսուցչանոցը անհրաժեշտ կահույքով
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Կոտայքի մարզ Չարենցավան քաղաք, կրթության բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 1.261.577,00 դրամ:

15/11

6.	Բարեգործություն ստացողը	Չարենցավան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցը
7.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ հոկտեմբերի 12-ից մինչև 2011թ. դեկտեմբերի 30-ը
8.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Չեղք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից Չարենցավան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցի թվով մեկ դասարանի և ուսուցչանոցի համար ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի համաձայն գույքի պատրաստում, գնում եւ անհատույց հանձնում՝ 1.261.577,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Գիտության և կրթության նախարարության հետ:
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական Արմինա Դարբինյանը

15/11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
21 հոկտեմբեր 2011 թվականի N Մ-885Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-796-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և
Հայաստանի միջև համերաշխություն» բարեգործական
կազմակերպության Գյումրու մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և
Հայաստանի միջև համերաշխություն» բարեգործական կազմակերպության Գյումրու մաս-
նաճյուղի 2011 թվականի հոկտեմբերի 7-ի գրությունը և Հայաստանի Հանրապետության
Ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 17-ի N 3/3.8-2/86070-11 և
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 13-ի N ԱԱ/3-6/7274-11 եզրակացությունները,
ո Ր Ո Շ ՈՒ Մ է:


1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Ֆրանսիայի բողոքական
եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն» բարեգործական կազմակերպության
Գյումրու մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծման մասին» N Մ-796-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին կից ցուցակը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



Բաշխման ցուցակ

№	Անվանում	տեղ	քանակ	մետոն	բրուտ տոն	կլոմեր /դրամ/	Շահառուներ
1	Սալիկի տարիք	13		8875	9135	1. 211126 2. 239276 3. 214645 4. 584115	1. Գյումրիի Շնտամիք կենտրոն - 1500 կգ 2. Գյումրիի «Սամարիթեր» հիվանդանոց - 1700 կգ 3. Գյումրիի ԻնՖեկցիոն հիվանդանոց - 1525 կգ 4. Գյումրիի № 10 դպրոց - 4150 կգ
2	պթոռ փայտյա	260	260	1820	1820	1. 69222 2. 115369 3. 115369 4. 92295 5. 69222 6. 46148 7. 69222 8. 23074	1. SPFA-ի գրասենյակ - 30 հ 2. Գյումրիի Շնտամիք կենտրոն - 50հ 3. Գյումրիի ֆուտոն վարժարան - 50հ 4. Երևանի № 2 հատուկ (օժանդակ) դպրոց - 40հ 5. Դայ միասնության խաչ ԲՄԴԿ - 30հ 6. Զամրուս, քիվ 1 հատուկ կրթահամալիր - 20հ 7. Զվարթնոցի № 16 մանկապարտեզ - 30 հ 8. Երևանի N188 հիմնական դպրոց - 10հ
3	լինդեոն	3	1160 ²	182	182	49300	Երևանի Միջայեյակի անվան հիվանդանոց
4	կտոր տրիկոտաժե	6	6 փաթեթ	43	45	10671	ԼՂՀ, Ասկերամի շրջանի միջև. դպրոցներ
5	կարի պարագամեր	27	27 արկղ	625	635	1. 33964 2. 31538	1. Գյումրիի «Փյունիկ» կենտրոն-14հ 2. Գյումրիի «Անդկլիկ» կենտրոն-13հ
6	կարի մեքենա օգտագործված	3	6 հատ	66	69	1. 50270 2. 50271 3. 50271	1. ԼՂՀ, Ասկերամի շրջան, Խնձրատանի միջև. դպրոց - 2 հ 2. ԼՂՀ, Ասկերամի շրջան, Ասկերամի միջև. դպրոց - 2 հ 3. ԼՂՀ, Ասկերամի շրջան, Աստղաշենի միջև. դպրոց - 2 հ
7	գինո	4	4	88	90	72646	SPFA-ի սուտուճներ


12/14.20

8	պայուսակ ճամփորդական	1	արկղ 13 հատ	12	12	22507	SPFA-ի գրասենյակներ
9	ատամնաբուժական բազկաթռոի կոմպլեկտ /2 հատ/, ատամնաբուժական աթոռակ /3 հատ/	5		962	962	227402	Ախուրյանի շրջան, գյուղ Մայիսյան
10	ատամնաբուժակա պահարան	6	6 հատ	240	240	263199	Ախուրյանի շրջան, գյուղ Մայիսյան
11	աթոռ մետաղյա հիվանդի օգտագործված /9 հատ/, հիվանդի բազկաթոռ մետաղյա օգտագործված / 3 հատ/	12		195	195	1. 38830 2. 27735	1. Գյումրիի Գյուլբենկյանի հիվանդանոց - 7h 2. Գյումրիի «Սամարիթեր» հիվանդանոց - 5h
12	հաշմանդամի սայլակ օգտագործված	2	2 հատ	30	30	1. 21457 2. 21457	1. Գյումրիի «Սամարիթեր» հիվանդանոց -1h 2. Գյումրիի «Փյունիկ» կենտրոն-1h
13	ներքնակ	16	16	208	208	1. 29013 2. 17407	1. Գյումրիի «Սամարիթեր» հիվանդանոց -10h 2. Գյումրիի Գյուլբենկյանի հիվանդանոց - 6h
14	խողովակի պլաստիկ պահպանիչ	1	1	10	10	43695	SPFA-ր ջրի ծրագիր Ղարաբաղում
15	էլ. եռակցման սարք Lorch LK-180 օգտագործված	1	1	42	44	9512	SPFA-ր ջրի ծրագիր Ղարաբաղում
16	վերճաշակի	6	344	120	126	198964	Համահայկական հիմնադրամ
17	շապիկ	10	2642	520	530	472358	Համահայկական հիմնադրամ
18	մեջքի պայուսակ	8	337	158	168	34081	Համահայկական հիմնադրամ
19	սվիտեր	11	730	280	290	615267	Համահայկական հիմնադրամ
20	բլուզ	3	112	50	53	37080	Համահայկական հիմնադրամ
21	բաճկոն	4	72	65	70	237475	Համահայկական հիմնադրամ
22	սպորտային հագուստ	8	230	155	165	384338	Համահայկական հիմնադրամ
23	ժիլետ	2	82	25	27	23928	Համահայկական հիմնադրամ
24	կիսաշրջագցեստ	1	12	8	9	4056	Համահայկական հիմնադրամ
25	օգտագործված հագուստ	57		880	910	556451	Համահայկական հիմնադրամ
26	կոշիկ	1	24	15	16	9527	Համահայկական հիմնադրամ
27	խաղալիք պլաստմասյա	12		240	250	87806	Համահայկական հիմնադրամ
28	խաղալիք փափուկ	5		100	103	36475	Համահայկական հիմնադրամ
29	խաղալիք «puzzle»	2		35	37	14192	Համահայկական հիմնադրամ
30	նկարի շրջանակ պլաստմասյա	5	230	97	102	71112	Համահայկական հիմնադրամ
31	թել գործելու	2		60	62	1. 10952 2. 10952	1. Գյումրիի Ընտանիք կենտրոն.- 30 կգ 2. Գյումրիի ֆոտոն վարժարան - 30 կգ
32	թուղթ նկարչական	10		134	144	32345	Համահայկական հիմնադրամ

15/11.2

33	տետր	2		34	36	8218	Համահայկական հիմնադրամ
34	գրիչ	2	2200	30	32	19061	Համահայկական հիմնադրամ
35	վրան	3	18	70	80	36432	Համահայկական հիմնադրամ
36	տպիչ Canon SS20 օգտագործված	1	1	5	6	16597	SPFA-ի գրասենյակներ
37	սկաներ Umax Astra 4500 օգտագործված	1	1	4	5	16501	SPFA-ի գրասենյակներ
38	DVD սկավառակ	1	83 հատ	10	11	6386	Համահայկական հիմնադրամ
39	բացիչ	1	55	10	11	17073	Համահայկական հիմնադրամ
Ընդամենը		518		16503	16920	5877855	

Բեռի արժեքը իր մեջ ներառում է բեռի մաքսային արժեքը 8000 ԵՎՐՈ և բեռնափոխադրման ծախսը 3000 ԵՎՐՈ, որոնց դրամային արժեքը «Շիրակի» SUS կողմից հաշվարկվել է ըստ ԿԲ սահմանած փոխարժեքի /1ԵՎՐՈ=534.36դրամ/ և ըստ 27.06.2011թ. Շ 489 ԲՄԳ-ի բեռի արժեքը կազմել է 5877855 դրամ /ներառյալ բեռնափոխադրման ծախսը/:



15/11.2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
21 հոկտեմբերի 2011 թվականի N Մ- 886-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-944-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՏԱՏԱՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («Երազ» բարեգործական
հիմնադրամ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Երազ» բարեգործական հիմնադրամի 2011
թվականի սեպտեմբերի 30-ի գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 7-ի N 3/3.8-1/85662-11 և Հայաստանի
Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011
թվականի հոկտեմբերի 7-ի N ԱԱ/3-67123/-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**:

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Երազ» բարեգործական
հիմնադրամի կողմից իրականացվող «Շաքարային դիաբետով հիվանդ երեխաներին դեղա-
միջոցների, բժշկական սարքերի ու պարագաների և բժշկական ու հոգեբանական օգնու-
թյան կամ հետազոտությունների նպատակով ֆինանսական միջոցների տրամադրում»
ծրագրի մասին» N Մ-944-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրու-
թյամբ (կցվում է):

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հա-
յաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրա-
պետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի
քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱԸ

Ա. ՏԵՐ - ՄԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
«Երազ» բարեգործական հիմնադրամի կողմից
սեպտեմբերի 2011թ.

ՀԱՄԱՐՈՎ ԴՆԱԿՏՈՎ ԴՐԱԳՐԻ ԵՐԵՄԱՆՆԵՐԻՆ ՂԵՂԱՄԻՋՈՑՆԵՐԻ, ԲԾՇԿՎԱԿԱՆ
ՍԱՐՔԵՐԻ ՈՒ ՊՐՈՎՈՎՆԵՐԻ, ԵՎ ԲԾՇԿՎԱԿԱՆ ՈՒ ՀՈՐԵԲՎԱԿԱՆ ՕՍՈՒԹՅԱՆ
ԿԱՄ ԴԵՏԱՋՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏՎՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԵՐՄԱՆ
Օ Ր Ո Շ ՈՒ Մ

1.	Ծրագրի նպատակը Բարեգործական օժանդակություն Երևանի «Միլիթար Չերացու» անվան պետական բժշկական համալսարանական թիվ 1 կլինիկական և «Մուրացան» կլինիկական հիվանդանոցներում բժշկական օգնություն ստացող շաքարային դիաբետով հիվանդ կամ էնդրկրին համակարգի այլ հիվանդություններ ունեցող, և այդ հիվանդությունների հետևանքով հաշմանդամության կարգ ունեցող, դեղորայքի, բժշկական սարքերի, հետազոտության, բուժման կամ բժշկական միջամտության անհրաժեշտություն ունեցող 0-18 տարեկան երեխաներին:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը Համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի բ) ենթակետի՝ ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով:
3.	Բարեգործ Հայաստանում գտնվող Հարությունների (Միխայիլ (AK 031593 001-ի կողմից) և Նարինե (AK 040700 001-ի կողմից), Վահան (AK 040444, 011-ի կողմից), Գևորգ (AH0200205, 011-ի կողմից) Հարությունների, Պետրոսյանների (Գեղամ (AG 0470700 004-ի կողմից) և Կրև (AK 0544887 004-ի կողմից) Պետրոսյանների, Պողոսյանների (Միհրան Պողոսյան (AK 0240609, 001-ի կողմից)), Գալստյանների (Սերգեյ (AG 0421682 011-ի կողմից) և Տաթևիկ (AH 0373306

1
14

		001-ի կողմից) Գալստյանների) բարերար ընտանիքները: «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ ք. Երևան, Աշտարակի խճուղի Յուլիսի Ավան թաղամաս վարչական շենք, ՀՎՀՀ 00068196)
4.	Ծրագրի կատարողը	«ԵՐԱՁ» բարեգործական հիմնադրամ (ՀՀ ք. Երևան 0009, Բայրոնի փող. 4 շ, բն. 11, ՀՎՀՀ 01570518)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան • առողջապահական ոլորտ
6.	Ծրագրի բյուջեն	16 000 000 ՀՀ դրամ <u>աղբյուրներ:</u> <u>անհատ բարերարների նվիրատվություններ և հանգանակություններ:</u> • Հարությունյանների բարերար ընտանիք – 4,5-5 միլիոն ՀՀ դրամ, • Պետրոսյանների բարերար ընտանիք – 2,5-3 միլիոն ՀՀ դրամ, • Պողոսյանների բարերար ընտանիք – 2 միլիոն ՀՀ դրամ, • Գալստյանների բարերար ընտանիք – 1 միլիոն ՀՀ դրամ: <u>բարեգործական կազմակերպությունների նվիրաբերություններ</u> • «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ - 3 150 000 ՀՀ դրամ. <u>բարեգործական նշանակության միջոցառումներ (համերգներ, սպորտային միջոցառումներ և այլն) - 2-3 միլիոն ՀՀ դրամ,</u> <u>սպիտակ և ժամկետները ըստ եռամսյակների:</u> • 3 500 000 ՀՀ դրամը 2010 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2011 թվականի փետրվարի 28-ը. • 3 500 000 ՀՀ դրամը 2011 թվականի մարտի 01-ից մինչև 2011 թվականի մայիսի 31-ը. • 3 500 000 ՀՀ դրամը 2011 թվականի հունիսի 1-ից մինչև 2011 թվականի օգոստոսի 31-ը. • 3 500 000 ՀՀ դրամը 2011 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2011 թվականի նոյեմբերի 30-ը:
7.	Բարեգործություն ստացողը	«Մխիթար Հերացու» անվան պետական բժշկական համալսարանական թիվ 1 կլինիկական և «Մուրացան» կլինիկական հիվանդանոցներում բժշկական օգնություն ստացող շաքարային դիաբետով հիվանդ կամ էնդոկրին համակարգի այլ հիվանդություններ ունեցող, և այլ

15/11/11

		հիվանդությունների հետևանքով հաշմանդամության կարգ ունեցող, դեղորայքի, բժշկական սարքերի, հետազոտության, բուժման կամ բժշկական միջամտության անհրաժեշտություն ունեցող 0-18 տարեկան 200 (երկու հարյուր) երեխաներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2010 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<ol style="list-style-type: none"> 1. Նախապատրաստական աշխատանքներ (12.2010թ.) - Երևանի «Մխիթար Հերացու» անվան պետական բժշկական համալսարանական թիվ 1 կլինիկական և «Մուրացան» կլինիկական հիվանդանոցների անձնակազմերի օժանդակությամբ, հիմնադրամի ուժերով և միջոցներով, շահառուների շրջանակի որոշում (շահառուների գրանցում, ցուցակների և անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստում), շահառուների վերաբերյալ տեղեկատվական բազայի նախապատրաստում, անհրաժեշտ օգնության ծավալի գնահատում - (300 000 ՀՀ դրամ), 2. Ձեռքբերվող նյութեր (12.2010թ. – 11.2011թ.) - Դեղորայքի, թեստերի, բժշկական պարագաների և սարքերի ձեռք բերում տեղի շուկայից և պահեստավորում, հետագայում ժամանակացույցերի հիման վրա շահառուներին տրամադրելու նպատակով - (12 536 000 ՀՀ դրամ), 3. Ընթացիկ աշխատանքներ (12.2010թ. – 11.2011թ.) - Երևանի «Մխիթար Հերացու» անվան պետական բժշկական համալսարանական թիվ 1 կլինիկական և «Մուրացան» կլինիկական հիվանդանոցների անձնակազմերի հետ համագործակցությամբ պատրաստված համապատասխան ժամանակացույցերի ու ցուցակների հիման վրա շահառուներին անհրաժեշտ ընթացիկ բժշկական և լաբորատոր հետազոտությունների անցկացման կամ բժշկական միջամտության նպատակով ֆինանսական միջոցների տրամադրում - (64 000 ՀՀ դրամ), 4. Նախատեսվող միջոցառումներ (12.2010թ. – 11.2011թ.) - Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ շաքարային դիաբետով հիվանդ կամ հաշմանդամության կարգ ունեցող երեխաների համար բարեգործական նշանակության ժամանցային միջոցառումների կազմակերպում - (400 000 ՀՀ դրամ), 5. Հիմնական աշխատանքներ (12.2010թ. – 12.2011թ.) - Հիմնադրամի գրասենյակում կամ հիմնադրամի կողմից կազմակերպված բարեգործական նշանակության ժամանցային միջոցառումների ընթացքում, ժամանակացույցերի և ցուցակների հիման վրա, դեղորայքի, թեստերի, բժշկական պարագաների և սարքերի անհատույց տրամադրում շահառուներին,


15/11/11

10.	Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	<p>- (200 000 ՀՀ դրամ),</p> <p>6. Եզրափակիչ աշխատանքներ (12.2011թ.) - Արդյունքների ամփոփում, հաշվետվությունների պատրաստում, հոգաբարձուների խորհրդին կատարված աշխատանքների ներկայացում - (500 000 ՀՀ դրամ),</p> <p>1. <u>Դեղորայք</u> - Ինսուլինային դեղամիջոցներ (Կորտեֆ, Սոլուկորտեֆ, Աճի հորմոն, Գլյուկոզայի հաբեր, Գլյուկագոն, Լանտուս, Ապիդրա, Նովոլոգ, Խումալոգ, Էնդոլինին հիվանդություններով տառապող երեխաներին անհրաժեշտ այլ դեղամիջոցներ) - <u>2 141 720 ՀՀ դրամ</u>,</p> <p>2. <u>Թեսթեր</u> - Գլյուկոմետր և նրանց թեսթերը, Բետա-չեկ թեսթեր (գլյուկոզայի մակարդակը արյան մեջ որոշելու համար) - <u>11 394 280 ՀՀ դրամ</u>,</p> <p>3. <u>Բժշկական պարագաներ</u> - Ինսուլինային ներարկիչներ և սաղմներ - <u>0 ՀՀ դրամ</u>,</p> <p>4. <u>Բժշկական սարքեր</u> - CGMS – continius glucose monitoring system (գլյուկոզայի մակարդակի մոնիտորինգի շարունակական համակարգ) և պարագաներ, Բժշկական կշեռք, Նեգատասկոպ (շաքարային դիաբետով հիվանդ երեխաների առողջական վիճակի վերահսկում) - <u>0 ՀՀ դրամ</u>,</p> <p>5. Բարեգործական նշանակության ժամանցային միջոցառումների կազմակերպում - <u>400 000 ՀՀ դրամ</u>,</p> <p>6. <u>Բժշկական և լաբորատոր հետազոտությունների անցկացում (լաբորատորիաներ)</u></p> <ul style="list-style-type: none"> • Դիագնոստիկա բժշկական կենտրոն, • Բժշկական զենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոն, • «Նոր Մեդ» ախտորոշիչ բժշկական կենտրոն, • «ՎԻՈԼԱ» արյան և ախտորոշման կենտրոն, • «Դիալաբ» կլինիկական լաբորատորիա, • «Դիագեն պլյուս» ՍՊԸ, • «Էկոսենս» լաբորատորիա, • «Միզմալաբ» կլինիկական ախտորոշիչ (լաբորատորիա) - <u>64 000 ՀՀ դրամ</u>, <p>7. Աուդիտորական ծառայություններ – <u>150 000 ՀՀ դրամ</u>,</p> <p>8. Գրենական պիտույքներ և այլ գրասենյակային պարագաներ – <u>100 000 ՀՀ դրամ</u>,</p> <p>9. Ժամանակակից տեխնիկական միջոցներ – <u>400 000 ՀՀ դրամ</u>,</p> <p>10. Աշխատավարձ և գործատուի սոցիալական վճարներ - <u>1 350 000 ՀՀ դրամ</u></p>
-----	--	---

15/11/11
4

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	<p>1. Աուդիտորական ծառայություններ – 150 000 ՀՀ դրամ</p> <p>2. Գրենական պիտույքներ և այլ գրասենյակային պարագաներ – 100 000 ՀՀ դրամ</p> <p>3. Ժամանակակից տեխնիկական միջոցներ – 400 000 ՀՀ դրամ</p> <p>4. Աշխատավարձ և գործատուի սոցիալական վճարներ – 1 350 000 ՀՀ դրամ</p> <p>ԸՆդհանուր՝ 2 000 000 ՀՀ դրամ (ծրագրի բյուջեյի 12.5%)</p>
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	<p>1. ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով,</p> <p>2. ՀՀ առողջապահության նախարարություն,</p> <p>3. Երևանի քաղաքապետարան,</p> <p>4. Այլ կազմակերպություններ՝</p> <ul style="list-style-type: none"> • Երևանի «Մխիթար Հերացու» անվան պետական բժշկական համալսարանական թիվ 1 կլինիկական հիվանդանոց, • Երևանի «Մխիթար Հերացու» անվան պետական բժշկական համալսարանական «Սուրացան» կլինիկական հիվանդանոց, • «Նոր Մեդ» բժշկական կենտրոն:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	<p>Հաշվետվությունների ներկայացում՝</p> <ul style="list-style-type: none"> • ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, • «ԵՐԱԶ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ, • ՀՀ առողջապահության նախարարություն: <p>Ծրագրի թափանցիկությունն ապահովող այլ միջոցառումներ՝</p> <ul style="list-style-type: none"> • զանգվածային լրատվության միջոցներում ծրագրի ընթացքի և կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկությունների և հաշվետվությունների հրապարակում, • ինտերնետային կայքի (-երի) միջոցով տեղեկությունների հրապարակում:

Կազմեց՝ «ԵՐԱԶ» ԲՀ տնօրեն Կ.Մխիթարյան



15/11/11
5



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2011 թվականի N Մ-
քաղ. երևան

887

-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N Մ-153-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒՇՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 5-ի N3/3.8-2/85610-11 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 12-ի N ԱԱ/3-6/7281-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է:**

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված ապրանքները (8 տեղ, 4560 կգ ընդհանուր քաշով, 14400.85 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 4650 ԱՄՆ-ի դոլար, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-153-Ա որոշմամբ (2009 թվականի հոկտեմբերի 9-ի N Մ-704-Ա, 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-704-Ա, 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-059-Ա և 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-523-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ

ԱՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՆՎԱՆԱՅԱՆԿ

Փոխադրման ամփոփոգիր N 2011/33/40171 առ 27.09.2011թ.

15/10.12

N	Ապրանքի անվանումը	Բրուտո քաշը կգ	Նետո քաշը կգ	Լրացուցիչ միավոր	Տեղերի քանակ	Ծագման երկիր
1	Նախաներկ՝ սինթետիկ	3800	3200	3200 կգ	6	ԱՄՆ
2	Ձեռքի գործիք՝ մետաղական բռնակով, ռետինե գլխիկով - 3 հատ	44	40	40 կգ		ԱՄՆ
3	Ակրիլային հիմքով քրադիսպերսիոն ներկեր	480	430	431 կգ	1	ԱՄՆ
4	Պոլիմերային խողովակներ	25	20	20 կգ		ԱՄՆ
5	Ցանցեր՝ մեծ բեռնիսի դաշտերի համար՝ իր կանգնակներով և անիվներով	210	195	3 հատ	1	ԱՄՆ
6	Չափերիզ՝ անիվներով	1	0,8	1 հատ		ԱՄՆ
	ԸՆԴՀԱՆՈՐ	4560	3885,8		8	

«Հայ. ֆուտբոլի ֆեդ.» Իր. ամծ. փոխ

Լիազոր ներկայացուցիչ

Ֆ. Գևորգյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

21 հոկտեմբերի 2011 թվականի N Մ - **888** - Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-941-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ (N 1)
(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N 3/3.8-2/85335-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 4-ի N ՖԲ/ԱնՄ-5/7999-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N ԱԱ/3-6/6940-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված տոմատի մածուկը և շաքարավազը (822 տեղ, 18959.49 կգ ընդհանուր քաշով, 30319.68 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2800 ԱՄՆ-ի դոլար, բերի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-941-Ա որոշմամբ (2011 թվականի հունիսի 6-ի N Մ-353-Ա և 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-853-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, Երևանի քաղաքապետարան, Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզպետարաններ:

ՆԱԽԱԳԱՀ

Ա.ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ

Քեռի բաշխման ցանկ

Ինվոյս N 024567 24.09.2011թ.

